

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ  
2014Թ-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քննարկումը տեղի է ունեցել գյուղապետարանի դահլիճում, որ սկսվել է 2015 թվականի հունվարի 20-ին ժամը 14<sup>00</sup>-ին:

Քննարկմանը մասնակցել են Արմավիրի մարզպետարանից փոխմարզպետ՝ Սովետա Քարդաշյանը, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, բուժ ամբուլատորիայի տնօրենը և աշխատակիցները, ավագանու անդամները, մանկապարտեզի տնօրենը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողները և համայնքի բնակիչներ:

2014 թվականի ընթացքում համայնքում կատարվել են ներքոնշյալ աշխատանքները՝

1. Անցկացվել է Համայնքի ավագանու 12 նիստ, որոնց ժամանակ քննարկվել են համայնքում կարևոր լուծում պահանջող հարցեր, իսկ ավագանու որոշումները փակցված են համայնքում՝ գյուղապետարանի շենքում՝ բնակիչների համար տեսանելի տեղում:
2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասով նախատեսված գումարներով համայնքի կարիքների համար ձեռք է բերվել 2 տրակտոր /Բելուրուս US2/ և պահանջվող գյուղգործիքներ:
3. Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել են 95 որոշումներ, արձակվել են 15 կարգադրություններ, տրվել է շուրջ 1000 տեղեկանք՝ տարբեր կազմակերպություններ կայացնելու համար, ուղարկվել է շուրջ 230 ելից գրություն, տրվել են քաղվածքներ, համայնքի բնակիչների վերաբերյալ տրվել են մի շարք բնութագրեր, կազմվել է 9 կտակ:
4. Տեառնդառաջի կապակցությամբ համայնքի 15 նորապսակ ընտանիքների շնորհավորելու համար յուրաքանչյուր ընտանիքի հատկացվել է 15000 – ական դրամ:
5. Համայնքում ուսումնասիրվել է 2014թ-ի մարտի 30-ից մինչև ապրիլի 02-ը տևած ցրտահարությունից տուժած բնակիչների վնասված ցանքատարածությունները և հաշվառվել 29հա 100%-ով վնասված ցանքատարածություններ: Արմավիրի մարզպետարանից որպես աջակցություն տրամադրված սերմերը, դիզելային վառելիքը տրվել է տուժած բնակիչներին:
6. Համայնքի կողմից աշխատանքներ են տարվել Բանկերի և վարկային կազմակերպությունների հետ՝ խնդրելով հնարավորինս աջակցել տուժած վարկառու բնակիչներին՝ վարկերի մարման գործընթացում որոշակի արտոնություններ կիրառելով նրանց նկատմամբ:
7. Համայնքի բնակիչների ամառային հանգիստը արդյունավետ անցկացնելու նպատակով կազմակերպվել են միջոցառումներ, որի ընթացքում համայնքի շուրջ ութ հարյուր բնակիչ մեկնել են Սևան: Բնակիչներին տրամադրվել է գումար, իսկ տեղափոխումը իրականացնող ավտոբուսներն՝ դիզվառելիք /1300լիտր/:
8. Համայնքի տարածքում պատշաճ մակարդակով կազմակերպվել է աշնանային զորակոչը:
9. Կազմակերպվել է միջոցառումներ՝ նվիրված կանանց տոնին ու մայրության օրվան, Հայրենական մեծ պատերազմի և Արցախի ազատագրման տարելիցներին, Ամանորի և Սուրբ ծնունդի տոներին:
10. Համայնքի բնակիչ 3 զորակոչիկների էջմիածնի ավտոդպրոցում սովորելու համար՝ անվճար երթևեկություն ապահովելու նպատակով, յուրաքանչյուրին հատկացվել է 20.000-ական դրամ:
11. Կազմակերպվել և իրականացվել է ներհամայնքային առուների մաքրման աշխատանքներ, այդ թվում նաև՝ կիսախողովակների:
12. Կատարվել է դաշտամիջյան ճանապարհների հողալցման և հարթեցման աշխատանքներ՝ նախապատրաստվելով բերքահավաքին, իսկ բերքահավաքն անցկացվել է առանց խոչընդոտների:
13. Համայնքի տարածքում կազմակերպվել է շաբաթօրյակ և մաքրվել են կենտրոնական փողոցը և գյուղամիջյան հատվածը:
14. Համայնքում նորմալ սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ աղբահավաք տրանսպորտային միջոցով կատարվում է աղբահավաքման աշխատանքներ:
15. Խճապատվել են համայնքի մի շարք փողոցներ:
16. Համայնքի բյուջեի միջոցներով համայնքի մանկապարտեզում կառուցվել է նոր սանհանգույց:

17. Համայնքի բնակիչների հանգիստն կազմակերպելու համար կառուցված զբոսայգում կատարվել են լուսավորման աշխատանքներ՝ տեղադրվել են էլեկտրական սյուներ և լուսակիրներ:
18. Համայնքի տարածքում ազգաբնակչության աճը խթանելու նպատակով խրախուսվել են համայնքի երիտասարդ ընտանիքները և շուրջ 36 ընտանիք ստացել է 50000-ական դրամ գումար:
19. Համայնքի բյուջեի միջոցներով ապրիլ –նոյեմբեր ամիսներին իր աշխատանքներն է սկսել և ավարտել Համայնքի «Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, որտեղ հաճախել են համայնքի շուրջ 57 երեխաներ:
20. Տարվել են աշխատանքներ «Գեղակերտի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ն «Գեղակերտի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի վերակազմավորման համար:
21. Համայնքի միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի սաներին Երևան տեղափոխելու և ետ բերելու համար համայնքի բյուջեի միջոցներով տրամադրվել ավտոբուսներ:
22. Համայնքի բնակիչների հուղարկավորության ժամանակ որպես հարգանքի տուրք գյուղապետարանի կողմից առաքվել են ծաղկեպսակներ:
23. Համայնքի վարչական բյուջեի միջոցներից հատկացվել է սոցիալական օգնություն՝ համայնքի անապահով բնակիչներին, Արցախյան ազատամարտի մասնակիցներին, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին՝ 147 ընտանիքի:
24. Ժամանակին վճարվել է Գյուղապետարանի և Մանկապարտեզի աշխատողների աշխատավարձը և սոց. վճարները:
25. Այս ժամանակահատվածում կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություններ, պատասխանվել է նրանց բոլոր հարցերին, դիմումներին և տրամադրվել է պահանջվող փաստաթղթերը:

*Տարվա կտրվածքով* բյուջեի եկամուտները հավաքագրվել և ծախսերը կատարվել են հետևյալ համամասնություններով՝ հարկային եկամուտները՝ հողի հարկ պլան 13500.7հ/դ , փաստացի 13504.5հ/դ, կատարողական 100.03%, գույքահարկ պլան 2146,7 հ/դ, փաստացի 3484,3 հ/դ, կատարողական 162,31 %, տեղական տուրքեր պլան 276,5 հ/դ, փաստացի 274,9հ/դ, կատարողական 99,42%, այլ ոչ հարկային եկամուտներ պլան 229,0 հ/դ, փաստացի 789,8 հ/դ, կատարողական 344,89% դոտացիա պլան 37840,8 հ/դ, փաստացի 37840,4 հ/դ, կատարողական 100%, հողի և գույքի օտարումից սպասվելիք գումար՝ պլան -4000,0հ/դ, փաստացի 1430,9հ/դ կատարողական 35,77 %, տարեսկզբի ազատ մնացորդ 8103,2 հ/դ , սուբվենցիա պլան 199,8 հ/դ, փաստացի 199,8 հ/դ, կատարողական 100,0% վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ պլան՝7821,4 հ/դ , փաստացի 7821,4 հ/դ կատարողական 100% պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա՝ պլան՝ 3500.0հ/դ, փաստացի՝ 3500.0հ/դ, կատարողական 100%, ընդամենը եկամուտներ՝ պլան 69796,7 հ/դ, փաստացի 69127.8 հ/դ, կատարողական 99,04%: Ծախսեր՝ Տեղական ինքնակառավարում պլան 20878.9 հ/դ, փաստացի 20567.7 հ/դ, կատարողական 98.51 %, սոց. օգնություն պլան 8026.0 հ/դ, 8015.0 հ/դ, կատարողական 99.86%, մշակույթ, սպորտ և կրոն պլան 1500,0 հ/դ, փաստացի 1500.0 հ/դ, կատարողական 100%, սան մաքրում պլան 2079,0հ/դ, փաստացի 2078.4հ/դ, կատարողական 99.97%, կրթություն և գիտություն պլան 8449.8 հ/դ, փաստացի 8401.0/դ, կատարողական 99.42 %, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ պլան 5438.4հ/դ, փաստացի 5438.3հ/դ , կատարողական 100% , ֆոնդային բյուջե 23424.6հ/դ, փաստացի 20789.9 հ/դ, կատարողական 88.75 %, պահուստային ֆոնդ՝7821.4հ/դ : Ընդամենը ծախսեր պլան 69796,7 հ/դ, փաստացի 66790,3 հ/դ, կատարողական 95,69 % :

Տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ բարձրացվեցին հետևյալ հիմնախնդիրները՝

Համայնքում առկա խնդիրներն են

1. Հիմնովին վերանորոգման կարիք ունի Մշակույթի տան երկրորդ և երրորդ հարկերն ու տանիքը:

2. Անմխիթար վիճակում է գտնվում խմելու ջրի ցանցը՝ ջրատար խողովակները ամբողջությամբ վնասված են:
3. Անհրաժեշտ է ավարտին հասցնել գյուղի մնացած փողոցների խճապատումը:
4. Պետք է շարունակվի ու ավարտին հասցվի դպրոցի ներքին հարդարման աշխատանքները:
5. Հիմնովին վերանորոգման կարիք ունի գյուղի Ծանրամարտի մարզադպրոցը:
6. Կարևոր նշանակություն ունի համայնքի Բուժ ամբուլատորիայի համար շտապ օգնության մեքենայի առկայությունը, քանի որ այն սպասարկում է 4 համայնք:
7. Անմխիթար վիճակում է գտնվում համայնք սնուցող էլեկտրական ցանցը, անջատումներն տեղի են ունենում շատ հաճախակի՝ կապված լարերի անպիտանիության հետ:
8. Վերանորոգման կարիք ունի համայնքի մանկապարտեզը:

Գեղակերտ համայնքի ղեկավար

Ս. Առաքելյան

20.01.2015թ

